Արձանագրություն N 6 /ճշտված/

ԱՐԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/4 ծածկագրով էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Ք. Արթիկ

04 մարտի 2021թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Յուրիկ Ղազոյան
Գնահատող անդամներ՝ Մարինե Խաչատրյան, Գրիշա Հովհաննիսյան
Բացող անդամներ՝ Կարինե Գասպարյան, Լիզա Մաթևոսյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ս. Շախպազյան

<<Արթիկի բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի կողմից կազմակերպված **ԱՐԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/4** ծածկագրով Բժշկական գործիքների և պարագաների ձեռք բերման նպատակով կազմակերպված գնանշման հարցման ընթացակարգի հայտերի բացումը տեղի է ունեցել 28/12/2020թ. -ին ժամը 12:00-ին էլեկտրոնային գնումների Armeps համակարգի միջոցով:

13/01/2021թ.-ին <<Լևոն և Լամարա Դեղատուն>> ՍՊԸ-ի կողմից <<Արթիկի բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի ԱՐԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/4 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացվել է դիմում այն մասին, որ հրավերով սահմանված 33,34,35,36,43,44,45,46,47,48,58,59,62 չափաբաժիններում նշված ապրանքները ազատված են ԱԱՀ-ից, և մասնակիցները իրավունք չունեն այդ ապրանքների գնում ներառել ԱԱՀ:

<<Լեյկո>> ՍՊԸ-ն և <<ՍԴԴ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ-ն ներկայացրել են իրենց հիմնավորումները այն մասին, որ իրավունք ունեն այդ ապրանքների գներում ներառել ԱԱՀ:

Վերը նշված դիմումը և հիմնավորումները ուղարկվել են ՀՀ Ֆինանսների նախարարություն՝ դիմումում նշված բողոքի վերաբերյալ պարզաբանում ստանալու նպատակով:

22/01/2021թ.-ին տեղի ունեցած հայտերի գնահատման նիստի արդյունքում մնացած չափաբաժինների մասով որոշվել էին հաղթող մասնակիցները և նրանց հետ կնքվել են պայմանագրեր, իսկ բողոքարկված չափաբաժինների մասով գնահատման նիստը կասեցվել էր՝ մինչև ՀՀ Ֆինանսների նախարարությունից պարզաբանման ստացումը:

03/03/2021թ.-ին ՀՀ Ֆինանսների նախարարությունից ստացվել է եզրակացություն, որտեղ առկա չէ վերջնական հրահանգավորում այն մասին, թե բողոքում ընդգրկված չափաբաժինները ազատված են ԱԱՀ-ից, թե ոչ:

Ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով «Լևոն և Լամարա դեղատուն» ՍՊԸ-ի կողմից գնահատող հանձնաժողովին ուղղված դիմումը առ այն, որ հրավերի 33-36-րդ չափաբաժինների մասերով պահանջվող տարբեր տեսակի և չափսերի ստերիլ և ոչ ստերիլ ձեռնոցների համար «Լեյկո» ՍՊԸ-ի, «ՍԴԴ Գրուպ» ՍՊԸ-ի և «Ս. Ա. Վ Գրուպ» ՍՊԸ-ի գնային առաջարկներում առանձնացված տողերով հաշվարկված են ԱԱՀ-ի գծով վճարվելիք գումարների չափեր, որոնք հակասում են գնումների օրենսդրությանը, որոշեց ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման թիվ 67 կետի համաձայն մերժել վերը նշված մասնակիցների հայտերը:

«Լևոն և Լամարա դեղատուն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված դիմումում ներառված են նաև 43-48-րդ չափաբաժինները՝ Ներարկիչներ տարբեր չափսերի, 58-րդ չափաբաժինը՝ Թանզիֆ 5մ: Այս չափաբաժինների մասով ևս <<Լեյկո>> ՍՊԸ-ն իր գնային առաջարկում ներկայացրել է ԱԱՀ: Սակայն տվյալ դեպքում <<Լեյկո>> ՍՊԸ-ի հայտը մերժվում է, քանի որ նրա ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են գնման հայտով սահմանված նախահաշվային գները:

Դիմումում ներառված 59-րդ չափաբաժնի՝ Բինտ 7*14-ի համար <<Լեյկո>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հիմնավորումները գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվեցին բավարար, և որոշվեց տվյալ չափաբաժնի մասով հաղթող ճանաչել <<Լեյկո>> ՍՊԸ-ին:

Դիմումում ներառված 62-րդ չափաբաժնի՝ Բամբակ բժշկական /ոչ ստերիլ/-ի համար <<Դեզսերվիս>>ՍՊԸ-ն իր ներկայացրած գնային առաջարկում ներառել է ԱԱՀ: Այս չափաբաժնի մասով որևէ խնդիր կամ պահանջ լինել չի կարող, քանի որ հաղթող մասնակից է ճանաչվում նվազագույն գնային առաջարկ ներկայացրած <<Լեյկո>> ՍՊԸ-ն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հիմք ընդունելով գնային առաջարկները հանձնաժողովը որոշեց ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել՝

- 43,44,45,46,47,48,58 - րդ չափաբաժիններով ընտրված մասնակից ճանաչել «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ին,
- 59 , 62- րդ չափաբաժիններով ընտրված մասնակից ճանաչել «Լեյկո» ՍՊԸ-ին,
- 33,34,35,36 - րդ չափաբաժիններով ընտրված մասնակից ճանաչել «Լևոն և Լամարա» դեղատուն ՍՊԸ-ին,

Ընդունվել է որոշում՝ կողմ -5, դեմ – 0:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածը՝հանձնաժողովը որոշեց անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը :

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

5.Հանձնաժողովը որոշեց ընթացակարգի արդյունքների ամփոփման նիստը հրավիրել պայմանագրերը կնքելուց հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

նախագահ՝ Յուրիկ Ղազոյան

Գնահատող անդամներ՝ Մարինե Խաչատրյան

Գրիշա Հովհաննիսյան

Բացող անդամներ՝ Կարինե Գասպարյան

Լիզա Մաթևոսյան

Քարտուղար՝ Սաթենիկ Շախպազյան